ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1- 2404 «24» 08 2013թ.

Ձեր 15.07.2013թ. թիվ 2621/1346 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հուլիսի 4-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունների ու խախտումների կապակցությամբ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից անցկացվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննության արդյունքներով պարզվել է.

1. Դիտորդների խմբի գրության համաձայն, Ռոբերտ Պետիկի Մարգարյանը ՁՊՎ է ընդունվել 13.04.2013թ. ժ.17.50-ին առանց պատշաճ հիմքերի և փաստաթղթավորման:

Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Հովսեփյանը իր բացատրությունում նշել է, որ ձերբակալված Ռ.Մարգարյանը ՁՊՎ է ընդունվել որպես հետախուզվող, որի նկատմամբ 08.12.2003թ. որոշում է կայացվել ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը ու հայտարարվել հետախուզում: Ռ.Մարգարյանը 13.04.2013թ. ներկայացվել է Արարատի մարզի քննչական բաժին և ձերբակալվել: Նրա վերաբերյալ ՁՊՎ-ում կազմվել է անձնական գործ, որում ներառվել են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության մասին դատարանի կողմից 13.04.2013թ. կայացրած որոշումը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշմման տվյալները, տեղեկանք ստորագրությամբ ծանուցվելու մասին, արձանագրություն ձերբակալվածի անձնական իրերի մասին, պահանջագիր դատվածության մասին, անհատական քարտ և անձնագրի պատճենը:

Ա.Հովսեփյանը ծառայողական քննության ժամանակ ներկայացրել է նշված փաստաթղթերի պատճենները և իր բացատրությամբ հայտնել, որ դրանք ներկայացրել է նաև դիտորդների խմբի անդամներին, սակայն վերջիններս անհասկանալի պատճառով հակառակն են արձանագրել:

2. Գրությունում նշված, Ռաֆայել Արծրունի Հունանյանի առնչությամբ արձանագրված խախտումների կապակցությամբ (չի ամրագրված նրան արգելանքի տակ վերցնելու պահը, ձերբակալման արձանագրությունը ստորագրված չէ կազմողի և ձերբակալվածի կողմից),

ոստիկանության Արտաշատի բաժնի ՔՀ բաժանմունքի ավագ օպեր լիազոր, ոստիկանության մայոր Ա.Մելքոնյանը իր բացատրությամբ հայտնել է, որ Ռ.Հունանյանը որպես հետախուզվող բերման է ենթարկվել իր կողմից, իսկ վերջինիս բերման և ձերբակալման արձանագրություններում միևնույն ժամը (12.04.2013թ. ժ.08.30) նշելը, ինչպես նաև նշված արձանագրությունները չստորագրելը և ձերբակալվածին ստորագրել չտալը շտապողականության և մեխանիկական վրիպում թույլ տալու արդյունք են:

Ոստիկանության Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Հովսեփյանն իր հերթին պատշաճ կերպով չի ստուգել Ռ.Հունանյանին ՁՊՎ ընդունելու հիմքերը, որի արդյունքում անձը ՁՊՎ է ընդունվել չստորագրված ձերբակալման արձանագրությամբ:

Այսուհանդերձ, վերոգրյալը թեպետ ձևականորեն ձերբակալման արձանագրությանը ներկայացվող պահանջների և ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելու կարգի խախտում է, սակայն տվյալ դեպքում ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշման 7-րդ կետով սահմանված հիմքերը առկա են եղել, քանի որ Ռ.Հունանյանի վերաբերյալ 06.02.2013թ. Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումը:

Այսպիսով, Ռ.Հունանյանի պարագայում, ՁՊՎ ընդունելու հիմքը (դատարանի վերոհիշյալ որոշումը) առկա է և ձերբակալման արձանագրության անհրաժեշտությունը չի եղել:

3. Դիտորդների խումբը որպես թերություն արձանագրել է Համբարձում Վարդանի Ազատյանի և Արամ Արայիկի Մանասերյանի ձերբակալման ժամկետների խախտումները:

Այսպես, Վ.Ազատյանը ոստիկանության Արտաշատի բաժին բերման է ենթարկվել 18.03.2013թ. ժ.16.00-ին, նույն օրը ժ.22.30-ին ընդունվել է ՁՊՎ, 21.03.2013թ. ժ.16.00-ին, ձերբակալման ժամկետը լրացած տեղափոխվել է Արարատի մարզի առաջին ատյանի դատարան, որտեղ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ա.Մանասերյանը բերման է ենթարկվել 18.03.2013թ. ժ.16.00-ին, ՁՊՎ է ընդունվել նույն օրը ժ.17.30-ին, խափանման միջոց կիրառելու նպատակով դատարան է տեղափոխվել 21.03.2013թ. ժ.16.00-ին ձերբակալման ժամկետը լրացած լինելով: Ընդ որում, վերջինիս բերման և ՁՊՎ ընդունելու ժամերի վերաբերյալ գրառումները կատարված են ջնջումներով:

Վերոգրյալ խախտումների կապակցությամբ ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Հովսեփյանը բացատրություն է տվել, որ նշված անձանց արգելանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 24 ժամ առաջ վարույթն իրականացնող մարմնին գրավոր չի իրազեկել, այդ մասին բանավոր է տեղեկացրել քննիչին և վերջինս 72 ժամը լրանալու պահին է դատարան տեղափոխել ձերբակալվածին:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի մարզի քննչական բաժնի քննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Գ.Սարգսյանի բացատրության համաձայն, Ա.Հովսեփյանը Հ.Ազատյանի և Ա.Մանասերյանի ձերբակալման ժամկետները լրանալու մասին իրեն որևէ կերպ չի իրազեկել, բացի այդ, ինքը վերջիններիս դատարան է տեղափոխել արգելանքի տակ պահելու ժամկետները լրանալուց համապատասխանաբար 6 ժամ 30 րոպե և 1 ժամ 30 րոպե շուտ: Տվյալ դեպքում քննիչ Գ.Սարգսյանը անտեսել է ՀՀ քր. դատ. օր-ի 173 հոդվածի 3-րդ մասի պահանջը, որի համաձայն, ձերբակալման ժամկետը սկսվում է անձին արգելանքի վերցնելու, այսինքն բերման ենթարկելու և ոչ թե ձերբակալելու պահից: Բացի այդ,

ՁՊՎ-ում պահվող և բերման ենթարկված անձանց հաշվառման գրանցամատյանների համադրումից պարզվել է, որ Հ.Ազատյանը ոստիկանության բաժին բերման ենթարկվածի կարգավիճակով պահվելու առավելագույն 3 ժամը լրանալուց հետո, շուրջ 3 ժամ առանց դատավարական կարգավիճակի գտնվել է ոստիկանության Արտաշատի բաժնում:

Այս կապակցությամբ, ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի մարզի քննչական բաժնի քննիչ Գ.Սարգսյանը բացատրություն է տվել, որ 18.03.2013թ. ժ. 17.00-ին ոստիկանության Արտաշատի բաժնից ստացվել է Հ.Ազատյանի և Ա.Մանասերյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերը և բերման ենթարկելու արձանագրությունները, որից հետո, վերջիններիս հետ կարճատև զրուցելուց հետո ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա, գողություն կատարելու փաստի առթիվ հարուցել է քրեական գործ: Նույն օրը ժ.17.30-ին ձերբակալել է Ա.Մանասերյանին և հարցաքննել նրան: Վերջինիս հարցաքննության հիման վրա ժ.22.30-ին ձերբակալել է Հ.Ազատյանին: Ընդ որում, նախաքննության շահերից ելնելով, ինչպես նաև նշված անձանց միաժամանակ հարցաքննելու և ձերբակալելու անհնարինության և քննչական խմբի մյուս քննիչների զբաղվածության պատճառով, Հ.Ազատյանը մինչև իր կողմից ձերբակալվելը մնացել է ոստիկանության Արտաշատի բաժնում: Բացի այդ, նշված անձանց կատարած հանցանքները ծանր հանցագործություններ էին և նրանց ազատ արձակելը բացասական հետևանքներ կունենար քրեական գործի օբյեկտիվության և բազմակողմանիության համար:

Տվյալ դեպքում քննիչ Գ.Սարգսյանի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131[1] հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն՝ <<հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն...>>:

Ա.Մանասերյանի վերաբերյալ բերման ենթարկված և ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման գրանցամատյաններում գրառումները ջնջումներով կատարված լինելը, ոստիկանության Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Հովսեփյանը և ՁՊՎ ոստիկան, ոստիկանության ավագ Ժ.Աղաբաբյանը պատճառաբանել են շտապողականությամբ, նշելով, որ ջնջումները կատարվել են պատահաբար և ոչ միտումնավոր:

4. Տիգրան Վլադիմիրի Թարժումանյանի առնչությամբ դիտորդների խմբի կողմից արձանագրված խախտումների կապակցությամբ ծառայողական քննությամբ պարզվել է, որ վերջինս ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 01.02.2013թ. ժ.11.50-ին կողոպուտ կատարելու կասկածանքով, նույն օրը ժ.14.50-ին ներկայացվել է քննչական բաժնի ավագ քննիչ, ոստիկանության կապիտան Վ.Ավետիսյանին և նույն ժամին վերջինիս կողմից ձերբակալվելուց և հարցաքննվելուց հետո, ժամը 18.50-ին ընդունվել է ՁՊՎ: 04.02.2013թ. ժ.10.20-ին Տ.Թարժումանյանը տեղափոխվել է դատարան, որտեղից ժ.12.50-ին կալանքի որոշումով վերադարձել է ՁՊՎ և նույն օրը ժ.16.00-ին տեղափոխվել ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ:

Այս դեպքում դիտորդներին թյուրիմացության տեղիք է տվել այն հանգամանքը, որ ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման մատյանի 7-րդ սյունակում (<<ձերբակալման ամսաթիվը և ժամանակը>>) ձերբակալման ժամը (14.50) նշելու փոխարեն, գրանցվել է ՁՊՎ ընդունման ժամը (18.50):

Ինչ վերաբերվում է Տ.Թարժումանյանի վերաբերյալ ՁՊՎ գրանցամատյաններում առկա ջնջումներին և ուղղումներին, ապա այս կապակցությամբ ոստիկանության Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Հովսեփյանը բացատրություն է տվել, որ գրանցամատյաններում կատարված ջնջումները արվել են ոչ թե միտումնավոր, այլ շտապողականության և շփոթվելու արդյունքում:

Ծառայողական քննության ընթացքում ոստիկանության Արտաշատի բաժնի հերթապահ մասի <<Ոստիկանության բաժին բերման ենթարկված անձանց հաշվառման>> և ՁՊՎ-ի գրանցամատյանների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցում ջնջումներով և ուղղումներով գրառումներ կատարելը կրում է պարբերական բնույթ, ինչը հերթապահ մասի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Հովսեփյանի անբավարար հսկողության արդյունք է:

Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի գրությունում նշված, ոստիկանության Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ Ա.Հովսեփյանի կողմից լարվածություն ստեղծելու հարցին, ապա ինչպես Ա.Հովսեփյանը այնպես ել նույն բաժնի ՁՊՎ ոստիկան, ոստիկանության ավագ Ժ.Աղաբաբյանը իրենց բացատրություններով հայտնել են, որ դիտորդների խմբի այցելության ժամանակ Ա.Հովսեփյանի կողմից ոչ մի լարվածություն չի ստեղծվել կամ խմբի նկատմամբ վատ վերաբերմունք չի ցուցաբերվել: Խմբին տրամադրել են պահանջվող բոլոր փաստաթղթերը և հարգալից վերաբերմունք ցուցաբերել նրանց նկատմամբ:

Ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությունը ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր և Արարատի մարզային վարչություններ՝ Արարատի մարզի քննչական բաժնի քննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Գ.Սարգսյանի և Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Հովսեփյանի կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու համար:

Նշված վարչությունների օպերատիվ խորհրդակցություններում քննարկվել է Ա.Հովսեփյանին և Գ.Սարգսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը և հաշվի առնելով, որ վերջիններս ղեկավարության կողմից բնութագրվում են դրական, ծառայության ընթացքում խրախուսվել են, կարգապահական տույժեր չունեն և ընդունում են իրենց կողմից թույլ տված խախտումները, ուստի որոշվել է վերջիններիս տույժի չենթարկել և բավարարվել քննարկումով: Միաժամանակ նրանց նախազգուշացվել է, որ հետագայում նմանատիպ խախտումներ թույլ տալու դեպքում կենթարկվեն խիստ կարգապահական տույժի:

պետ, ոստիկանության գեներալ-մայոր **Վ. Եղիազարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1346

3198
17 07 13

15.07.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

4682
17 07 13

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի հուլիսի 4-ին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ:

Նախ և առաջ Դիտորդական խումբը ցանկանում է տեղեկացնել, որ շատ մեծ մտահոգություն ունի կապված ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետ, ՁՊՎ-ի պատասխանատու Ա. Հովսեփյանի աշխատանքային էթիկայի և քաղաքացիների հետ շփվելու ունակությունների վերաբերյալ:

Խնդիրը կայանում է նրանում, որ Դիտորդական խումբը շատ անգամ է նկատել, որ Ա. Հովսեփյանը Դիտորդական խմբին հանդիպելով ստեղծում է լարված իրավիճակ և նրա մոտ այնպիսի տպավորություն է առաջանում, որ Դիտորդական խումբը Արտաշատի բաժնի ՁՊՎ-ում հատուկ մոնիթորինգ է իրականացնում պարտադիր թերություններ կամ խախտումներ արձանագրելու համար: Սակայն Դիտորդական խումբը ժամանակ առ ժամանակ նույն մեխանիզմով ինչպես մոնիթորինգ է իրականացնում Արատաշատի բաժնի ՁՊՎ-ում, այնպես էլ մնացած 32 ՁՊՎ-ներում: Այնուամենայնիվ միշտ տվյալ ՁՊՎ-ում Դիտորդական խմբի կողմից գրանցվում են թերություններ և խախտումներ ու միշտ էլ միջոցներ չի ձեռնարկվել արձանագրած թերությունները և խախտումները վերացնելու կապակցությամբ, այլ տրամադրվածություն է ստեղծվել Դիտորդական խմբի նկատմամբ:

Հաջորդիվ կփորձենք ներկայացնել տվյալ ՁՊՎ-ում արձանագրած թերությունները և խախտումները, որպեսզի ավելի պարզ լինի տվյալ բաժնի ՁՊՎ-ում առկա բացթողումները և հերթապահ մասի պետ Ա. Հովսեփյանի աշխատելաոճը:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

Արձանագրված թերությունները.

1-ին և 3-րդ խցերի ջրի խողովակները վնասված էին, իսկ 4-րդ խցի ջրի ծորակը ընդհանրապես չէր գործում:

Արձանագրված խախտումները.

1. Ռոբերտ Պետիկի Մարգարյանը ՀՊՎ է ընդունվել 13.04.2013թ-ին ժամը 17^{50}-ին առանց որևէ հիմնավոր փաստաթղթի: Տվյալ դեպքում բացակայում էր հետախուզվողի դատարանի կողմից խափանման միջոց կիրառելու որոշումը, հետախուզում հայտարարելու մասին որոշումը, ձերբակալման արձանագրությունը, ՀՊՎ-ում կազմվող անձնական գործը և մնացած բոլոր փաստաթղթերը: Նրա անձնական գործում միայն առկա էր կալանավորումը որպես խափանման միջոց կրկնակի լսելու դատարանի որոշումը և ՀՊՎ-ում խուզարություն կատարելու մասին արձանագրությունը: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3/*
2. Ռաֆայել Արծրունի Հունանյանը 12.04.2013թ-ին ժամը 08^{30}-ին բերման է ենթարկվել Այնթափ գյուղից և նույն ժամին ձերբակալվել է: ՀՊՎ է ընդունվել նույն օրը՝ ժամը 10^{30}-ին: Տվյալ անձի արգելանքի վերցնելու պահը ոչ մի տեղ ֆիքսված չէ, որովհետև նրան բերման ենթարկելու արձանագրությունը կազմվել է արդեն իսկ ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժնում, նույն ժամանակահատվածում, երբ ձերբակալվել է: Չնայած այն հանգամանքին, որ ձերբակալման արձանագրությունը կնքված էր, բացակայում էին ձերբակալողի և ձերբակալվածի ստորագրությունները: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 4,5/*
3. Ըստ «ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանի Համբարձում Վարդանի Ազատյանը ՀՊՎ է ընդունվել 18.03.2013թ-ին ժամը 22^{30}-ին, բայց նշված անձը ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժին բերան է ենթարկվել նույն օրը՝ ժամը 16^{00}-ին: Նշված անձը ըստ «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» գրանցամատյանի ՀՊՎ-ից դուրս է բերվել և տեղափոխվել է դատարան խափանման միջոց կիրառելու նպատակով 21.03.2013թ-ին ժամը 16^{00}-ին, արդեն իսկ ձերբակալման առավելագույն ժամկետը լրացած լինելով: Տվյալ դեպքում նշված անձը 21.03.2013թ-ին ժամը 16^{00}-ին, արդեն իսկ պետք է ազատ արձակված լիներ: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 6,7/*
4. Ըստ «ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանի Արամ Արայիկի Մանասերյանը ՀՊՎ է ընդունվել 18.03.2013թ-ին ժամը 17^{30}-ին: Նշենք, որ ժամը թե «ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանում և թե «Ոստիկանության բաժին բերման ենթարկվածների» գրանցամատյանում ժամը ջնջված և փոխված է: Բայց նշված

անձը ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժին բերան է ենթարկվել նույն օրը, ժամը 16⁰⁰-ին, բայց նշված անձը ըստ «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» գրանցամատյանի ՁՊՎ-ից դուրս է բերվել և տեղափոխվել է դատարան խափանման միջոց կիրառելու նպատակով 21.03.2013թ-ին ժամը 16⁰⁰-ին, արդեն իսկ ձերբակալման առավելագույն ժամկետը լրացած լինելով: Տվյալ դեպքում նշված անձը 21.03.2013թ-ին ժամը 16.00-ին, արդեն իսկ պետք է ազատ արձակված լիներ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 6,7/*

5. Տիգրան Վլադիմիրի Թաժումանյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժին 01.02.2013թ-ին ժամը 11⁵⁰-ին: 3 ժամ անց, ժամը 14⁵⁰-ին արդեն ներկայացվել է քննչական բաժին: Ըստ «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանի ՁՊՎ է ընդունվել 01.02.2013թ-ին ժամը 18⁵⁰-ին: Հաջորդիվ ըստ «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» գրանցամատյանի 04.02.2013թ-ին ժամը 10²⁰-ից մինչև 12⁵⁰-ը խցից դուրս է բերվել և տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով: Տեղեկացնենք, որ ինչպես խցերից դուրս բերման գրանցամատյանում, այնպես է ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման գրանցամատյանում միտումնավոր ժամերը ջնջվել և փոխվել են, որպեսզի տվյալ անձի բերման ենթարկելու և խափանման միջոց կիրառելու ժամերը համապատասխանեցնեն արգելանքի վերցնելու առավելագույն 72 ժամի հետ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 8,9,10/*

Ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ՁՊՎ-ի գրնացմատյաններում գրառումները կատարվում են ջնջումներով, մասնավորապես փոփոխության են ենթարկվում ժամերը:

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել վերը նշվածները և համապատասխան միջոցներ ձեռնարկել ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org